



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

22.02.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 07/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 01.02.2016թ. ներկայացրած բողոքը, (այսուհետ նաև՝ ԳԲԽ-07/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի 08.02.2016թ. թիվ 075/10 գրությունը և կից ներկայացրած փաստաթղթերի պատճենները, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.02.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 01.02.2016թ. ներկայացրած բողոքով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) տեղեկացրել է, որ 13.01.2016թ. «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՈՒԴ-ՇՀԱՊԶԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 16-րդ չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագիրը սահմանափակում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված նույնակտիվ բաղադրատարրերով դեղերի մնացած

տարբերակների մասնակցությունը տվյալ Ընթացակարգին, մասնավորապես, Ընկերության մասնակցության իրավունքը:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին նույն Որոշմամբ ներկայացվող պահանջները՝

1) դեղի անվանումը նշելիս՝ գրվում են դեղի միջազգային հանընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները: Եթե Հայաստանի Հանրապետության գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և ապահովվի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)):

Ընկերությունը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում «Գեմցիտաբին» միջազգային հանընդհանուր անվանումով գրանցված են «Գեմցիտաբին լիոֆիլիզատ», «Գեմցիտաբին խտանյութ» և «Գեմցիտաբին դեղափոշի» տարբերակներ, սակայն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում նշված է միայն «Գեմցիտաբին խտանյութ» դեղը, որն արդեն իսկ բերում է հակասության:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետի համաձայն՝ դեղաձևը՝ սահմանված բաղադրակազմով, գործածման համար որոշակի ձևով դեղահատեր, հաբեր, պատիճներ, կաթիլներ, սրվակներ, ներարկման հեղուկներ և այլն, կայուն ագրեգատային վիճակով (պինդ, մածուցիկ, հեղուկ, գազանման), ֆիզիկական և քիմիական հատկանիշների համալիր բնութագրով օժտված թողարկման ձև է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ խախտվել և չի պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, ինչպես նաև չկա ոչ մի օբյեկտիվ հիմնավորում դեղի կոնկրետ տարբերակի գնման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՈՒԴ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը 16-րդ չափաբաժնի մասով համարել չեղյալ, ինչպես նաև Պատվիրատուին պարտադրել, որ նշված չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը կազմվի՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի՝ դրանով ապահովելով Ընթացակարգին օրինական մասնակցելու հնարավորությունը:

Կենտրոնում 05.02.2016թ. ժամը 17:15-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչն ամբողջությամբ պնդել է ներկայացրած բողոքը, սակայն որևէ ապացույց չի ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում «Գեմցիտաբին» միջազգային համընդհանուր անվանումով գրանցված «Գեմցիտաբին լիոֆիլիզատ», «Գեմցիտաբին խտանյութ» և «Գեմցիտաբին դեղափոշի» դեղորայքի համարժեք լինելու վերաբերյալ:

2. «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն 08.02.2016թ. թիվ 075/10 գրությամբ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ԳՈՒԴ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ գնման ենթակա ապրանքի համար ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 16-րդ չափաբաժնով, սահմանվել է դեղորայքի անվանումը՝ «Գեմցիտաբին», բնութագիրը՝ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի, 1000մգ., ապակե ֆլակոններ:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների հատկանիշները, բացառելով այլընտրանքային մեկնաբանություն: ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող դեղին ներկայացվող պահանջները, այլ ոչ թե պարտադիր ներառեն գնվող առարկայի բոլոր հնարավոր ագրեգատային վիճակները:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ գնման ընթացակարգի շրջանակներում կատարվել է շուկայի ուսումնասիրություն և պարզվել է, որ «Գեմցիտաբին խտանյութ կաթիլաներարկման լուծույթը» մի քանի անգամ էժան է նույն դեղորայքի դեղափոշի տարբերակից, ավելի հարմար օգտագործման համար:

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն գրությամբ նշել է նաև, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն առաջին անգամ չէ, որ ուզում է ձախողել գործընթացը, նպատակ դնելով ամեն կերպ վաճառել իրենց դեղորայքը, բացի այդ Ընկերությունը նույն ձևաչափով բողոք է ներկայացրել Կենտրոնին 2014թ. և 2015թ.-ին:

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-07/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը Կենտրոնում 05.02.2016թ. ժամը 17:15-ին տեղի ունեցած հանձնաժողովի հանձնաժողովի նիստին:

3. ԳԲԽ-07/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 18.02.2016թ. եզրակացությունը և առաջարկել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 01.02.2016թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-07/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-07/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՈՒԴ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 16-րդ չափաբաժնով նախատեսված «Գեմցիտաբին» ապրանքատեսակի համար սահմանվել է բնութագիրը՝ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի, 1000մգ., ապակե ֆլակոններ, չափման միավորը՝ ֆլակոն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 01.02.2016թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետի համաձայն՝ դեղաձևը՝ սահմանված բաղադրակազմով, գործածման համար որոշակի ձևով դեղահատեր, հաբեր, պատիճներ, կաթիլներ, սրվակներ, ներարկման հեղուկներ և այլն, կայուն ագրեգատային վիճակով (պինդ, մածուցիկ, հեղուկ, գազանման), ֆիզիկական և քիմիական հատկանիշների համալիր բնութագրով օժտված թողարկման ձև է :

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին նույն Որոշմամբ ներկայացվող պահանջները:

Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դեղաձևը նշելիս՝ հիմք է ընդունվում «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սահմանված դեղաձևերը (օրինակ՝ դեղահատ, հաբ, պատիճ, կաթիլ և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)):

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստր) աղյուսակի 3-րդ՝ «միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները» սյունակում գրանցված «Գեմցիտաբին» անվանմամբ դեղի համար ռեեստրի 4-րդ՝ «դեղաձևը» սյունակում նախատեսված են տարբեր դեղաձևեր՝ «խտանյութ կաթիլաներարկման լուծույթի», «դեղափոշի լիոֆիլացված ն/ե ներարկման լուծույթի» և «դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի»:

Պատվիրատուն, ղեկավարվելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի պահանջներով, ելնելով իր գնման կարիքից, ամբողջությամբ և հստակ նկարագրել է ձեռք բերվող դեղին նույն Որոշմամբ ներկայացվող պահանջները, այդ թվում նաև նշել՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սահմանված կոնկրետ դեղաձևը¹, տվյալ դեպքում «խտանյութ կաթիլաներարկման լուծույթի», ինչն իր հերթին չի հանգեցրել Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջների խախտմանը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, ուստի բողոքն այս մասով հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը նույնանման փաստական հանգամանքներով կայացված 17.09.2014թ. ԳԲԽ-31/14 որոշմամբ մերժել է Ընկերության բողոքը, պատճառաբանելով, որ Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրով պահանջված «Գեմցիտաբին խտանյութ կաթիլաներարկման լուծույթի» դեղատեսակի սահմանումը խտրական չէ և չի կարող դիտվել Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, իսկ 11.06.2014թ. թիվ ԳԲԽ-18/14 որոշմամբ բավարարել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքը, հիմնավորելով, որ «Գեմցիտաբին» դեղի համար նախատեսված՝ «խտանյութ կաթիլաներարկման լուծույթի», «դեղափոշի լիոֆիլացված ն/ե ներարկման լուծույթի» և «դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի» դեղորայքները համարժեք դիտվել չեն կարող:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված այն պահանջին, ըստ որի պետք է Պատվիրատուին պարտադրել, որ նշված չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը կազմվի՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի, ապա այս կապակցությամբ Խորհուրդը հայտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը նման լիազորություն չունի:

¹ Պատվիրատուն իր գնման կարիքին համապատասխան ձեռքբերվող դեղի դեղաձևի ընտրության հարցը հիմնավորել է նաև Կենտրոնին ներկայացված 08.02.2016թ. թիվ 075/10 գրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 01.02.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:


Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Հայրապետյան Գևորգ

Անդամ՝



Չոբանյան Ռոման